# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 338-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի արևելյան մասում գտնվող, 06-060-0043-0008 ծածկագրով, 0.26826 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 13-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 8 հողամաս փոստային հասցե:
2. Ալավերդի համայնքի Հաղպատ գյուղի արևելյան մասում գտնվող, 06-060-0043-0011 ծածկագրով, 0.07473 հա մակերեսով հողամասին տրամադրել համայնք Ալավերդի, գյուղ Հաղպատ, 13-րդ փողոց, 3-րդ նրբանցք, 10 հողամաս փոստային հասցե:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 05
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2022 թվականի N 339-Ա

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 293-Ա, 26.09.2022թ. N 319-Ա որոշումները, սեփականության իրավունքի N 29092022-06-0028 վկայականը, վճարման անդորրագրերը և հաշվի առնելով, որ Սեյրան Արամայիսի Երիցյանն ընդունել է նկուղով ավտոտնակը և սպասարկման համար զբաղեցրած հողամաս ուղղակի վաճառքով ձեռք բերելու գնման նախապատվության առաջարկությունը, վճարել է օրինականացման համար սահմանված վճարները, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օսիպյան փողոց, 39 ավտոտնակ հասցեում գտնվող, համայնքի ղեկավարի 22.08.2022թ N 293-Ա, 26.09.2022թ. N 319-Ա որոշումներով համայնքային սեփականություն ճանաչված և օրինականացված, 67.0 քմ արտաքին մակերեսով (41.9 քմ ներքին մակերեսով) նկուղով ավտոտնակը՝ 68876 (վաթսունութ հազար ութ հարյուր յոթանասունվեց ) դրամ արժեքով և սպասարկման համար զբաղեցրած 0.0047 հա մակերեսով հողամասը՝ 37224 (երեսունյոթ հազար երկու հարյուր քսանչորս) դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Սեյրան Արամայիսի Երիցյանին:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում նկուղով ավտոտնակի և զբաղեցրած հողամասի առք ու վաճառքի պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 05
ք. Ալավերդի